ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Կյանքում շատ բան տեսած աչքերը հատկապես բարձր տրամադրության և ոգևորության պահերին այնպիսի տեսք են տալիս երեք քառորդդարյա ճանապարհ անցած նրա դեմքին, որ ինքնաբերաբար մտածում ես՝ Վարդգես Միքայելյանը գտել է տևականորեն երիտասարդ մնալու և ստեղծարար աշխատունակությունը պահպանելու բանալին: Երբ հայացք ես նետում ականավոր հայագետի 75-ամյա կյանքի ստեղծարար գործունեությանը, արածի քանակին և որակին, ասել է թե՝ վաստակի բովանդակությանը, զգում ես, որ միայն անմնացորդ նվիրումով է հնարավոր դարձել այն, ինչ նա կատարել է, և այսօր էլ շարունակում է կատարել.

Վ. Միքայելյանը պատմագիտության ասպարեզ մտավ իր անելիքի խոր գիտակցմամբ՝ հայ ժողովրդի անցյալն ուսումնասիրել գիտական պատմականության դիրքերից և համազգային պահանջներին ընդառաջ: Այսօր արդեն ժամանակակից սերնդի խորհող մեծամասնության համար ակադեմիկոս պատմաբանի կյանքն ու գործունեությունը, այդ տեսակետից, հետաքրքիր և ուսանելի է բազում կողմերով:

Վարդգես Ալեքսանի Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: Հայրենի գյուղում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվում և 1942-1947 թթ. ծառայում է սովետական բանակում, մասնակցում Հայրենական պատերազմին՝ պարգևատրվելով շքանշաններով ու մեդալներով: Զորացրվելուց հետո սովորում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և այն ավարտում գերազանցության դիպլոմով: Ասպիրանտուրան ավարտում է 1955 թ. և նույն թվականին պաշտպանում «Գյուղացիության դրությունը և գյուղացիական ելույթները Հայաստանում 1918-1920 թթ.» թեմայով թեկնածուական դիսերտացիան: Նրա կուռ ու պատկերավոր գրելաոճի ձևավորման գործում արգասավոր են եղել 1955-1959 թթ. «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում կատարած աշխատանքի տարիները:

Պատմաբանի դիտական և գիտակազմակերպական գործունեության օրրան է դառնում Հայաստանի Գիտությունների ակադեմիան, ուր նա գործունեություն է ծավալում 1960-ական թվականների սկզբից. 1960-

1972 թթ. Պատմության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող, 1972-1987 թթ. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, 1988 թ. վերստին Պատմության ինստիտուտում բաժնի վարիչ և միաժամանակ 1999 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր: Ակադեմիկոս Միքայելյանի գիտական և գիտակազմակերպական գործունեությանը բնորոշ են բաղմակողմանիությունը, գլխավորն ու էականը տեսնելու, նորն զգալու և նորի հետ քայլելու կարողությունը:

Նշանակալից է Վ. Միքայելյանի վաստակը միջնադարի ամենախոշոր հայ գաղութի՝ Ղրիմի հայկական գաղթօջախների 600-ամյա պատմության ուսումնասիրման գործում: 1964 թ. լույս տեսավ գիտնականի «Ղրիմի հայկական գաղութի պատմությունը» առաջին գիրքը, որը մեկ տարի հետո պաշտպանվեց որպես դոկտորական դիսերտացիա: Այնուհետև իրար հաջորդեցին նրա «Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1800-1917 թթ.)» երկրորդ գիրքը (1970), «Ղրիմի հայկական դաղթօջախի պատմությունը» (ռուսերեն, 1974), «Ղրիմահայոց պատմությունը» (1989): Այս աշխատություններում հեղինակը նոր հայտնաբերված նյութերի համապարփակ ընդգրկմամբ և դրանց գիտական վերլուծմամբ տվել է ղրիմահայ գաղութի պատմությունը սկզբից մինչև Ռուսաստանի վերջին հեղափոխությունը: Ակադեմիկոս Վ. Միքայելյանի ղրիմյան ուսումնասիրությունների շարքին պիտի դասել նաև «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Լազար Մարկոսի Արծաթագործյան)» ուսումնասիրությունը (1979), որը լուսաբանում է ռուսական նավատորմի ականավոր ծովակալներից մեկի կյանքն ու գործը: Հեղինակի այս աշխատությունը չափազանց կարևոր նշանակություն ունի Արևմտյան Կովկասում անգլո-թուրքական սադրիչ գործողությունների դեմ Ռուսաստանի մղած պայքարի լուսաբանման համար. ասում ենք չափազանց կարևոր, քանզի ներկայումս էլ Հյուսիսային Կովկասում ծավալվող իրադարձությունները պատմական անցյալի աննշան փոփոխություններ կրած մերօրյա կրկնությունն են:

Տեղին ենք համարում ընդգծել նաև, որ ղրիմահայոց պատմության իր գրքաշարով Վ. Միքայելյանը ցուցադրեց հայ ժողովրդի միջազգային կապերի (հայ-ռուսական, հայ-ուկրաինական, հայ-լեհական, հայ-իտալական) հենքի վրա համազգային շահի գիրքերից բազում աշխարհաքաղաքական հարցերի պատմագիտական և քաղաքագիտական մեկնաբանություններ տալու խորագիտությունն ու հմտությունը, հատկություններ, որ նա ձեռք է բերել ոչ միայն արխիվներում աշխատելիս, ուսումնասիրվող թեմային ուղղակի և անուղղակի առնչվող բոլոր վավերագրերը պատմաքննական վերլուծության ենթարկելիս, այլև դիտական ամենատարբեր մակարդակով ժողովածուներ կազմելիս և հրատարակելիս: Այս տեսակետից անանց արժեք ունեն «Հայ-իտալական առնչություններ (Ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին)» (1974) ժողովածուն և ծովակալ Լ. Սերեբրյակովի վերաբերյալ «Բանբեր Հայաստանի արխիվների» պարբերականում 1973 թ. (12 մամուլ ծավալով) հրատարակված փաստաթղթերի հավաքածուն:

Տակավին 1960-ական թվականների վերջերից Վ. Միքայելյանը արցախյան հիմնահարցի արդար լուծման անդրանիկ սատարողներից էր, այն սակավաթիվ պատմաբաններից, որոնց համար անընդունելի էր «չի կարելին» և խոսքով ու գրչով ջանում էին ոչ միայն անիրազեկներին, այլև խորհրդային բյուրոկրատիայի ամեն ինչից «լավատեղյակ» բարձրադիր պաշտոնյաներին ներկայացնել պատմական անարդարության սկզբնավորման հանգամանքներն ու հետևանքները: Ավելորդ չենք համարում նշել, որ 1969 թ. Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտում, այն ժամանակվա համար իր օրակարգով աննախադեպ ինն ժամ տևած կուսակցական ժողովում, ուր քննվում էր ոչ անհայտ Զ. Բունիաթովի ու նրա խմբակցության կողմից Ղարաբաղի պատմության նենգափոխման մերկաց-

մանը նվիրված Վ. Միքայելյանի համարձակ գեկուցումը. միաբան որոշում ընդունվեց դիմել ԽՄԿԿ Կենտկոմ՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը քննարկման առարկա դարձնելու պահանջով: 1978 թ. Վ. Միքայելյանի խմբագրած «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 5-րդ համարում տպագրվեց «Զ. Բունիաթովի հերթական «մտորումների» մասին» (ռուսերեն) մերկացնող հոդվածը: Ուշագրավ է նաև, որ 1988 թ. արցախյան շարժման վերելքի օրերին, Երևան ժամանած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Լուկյանովին և Դոլգիխին հանձնված Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ միակ գիտական փաստաթուղթը Վ. Միքայելյանի շարադրած ընդարձակ տեղեկանքն էր: Ընթերցողի միտքը արցախյան շարժման բուռն իրադարձությունների ժամանակ Վ. Միքայելյանի ծավալած գործունեության մանրամասներով չծանրաբեռնելու համար նշենք միայն, որ նա հիմնահարցի վերաբերյալ բազում հոդվածներ տպագրեց հանրապետության, սփյուռքահայ և օտարալեզու մի շարք պարբերականներում. 1992 թ. ռուսերեն լեզվով լույս ընծայեց «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թթ.» վերտառությամբ փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որի կազմողների ղեկավարը, պատասխանատու խմբագիրը և ընդարձակ ներածության հեղինակն էր: Անվարան կարող ենք ասել, որ առ այսօր հրապարակված նմանատիպ հրատարակություններից այն առավել լիակատարն է, ուր արտացոլված են 1918-1923 թթ. Արցախի պատմության ամենաառանցքային հարցերը: Կառուցվածքային ընդհանուր ամբողջության մեջ ժամանակագրական կարգով լրացնելով մեկը մյուսին, ժողովածուի փաստաթղթերն ու նյութերը հնարավորություն են տալիս ընթերցողին ամբողջական պատկերացում կազմել երկրամասի հայության այդ տարիների հերոսական պայքարի և աշխարհի հզորների կամքով արդարությունը բանտելու դարերից եկող այդ նորագույն տարբերակի մասին: «Առաջաբանում» և «1988-1992 փորձության ծանր տարիներ» հոդվածում Միքայելյանը փաստերի ու մտքերի զորեղ տրամաբանությամբ ցույց է տվել ինչպես Արցախի հիմնահարցի ծագման և ձախողման պատմական լայնքը, այնպես էլ պատմական նոր շրջափուլում այն վակուղի տանող հակահայկական ուժերի համատեղ գործողությունների ամբողջական համայնապատկերը: Արդ, ութ տարի անց, բնութագրելով այդ ժողովածուն, վերստին ուզում ենք հաստատագրել, որ վերոհիշյալ պատմաշրջանի բոլոր, կամ գրեթե բոլոր, հարցերը ստացել են իրենց պատասխանները:

1990-1992 թթ. Վ. Միքայելյանը հիմնադրեց և խմբագրեց «Գոյամարտ» լրագիրը, որի էջերը հագեցված էին պատմահայրենասիրական և արցախյան հիմնահարցը լուսաբանող նյութերով:

Գիտության և քաղաքականության մեջ կեղծիքի և փարիսեցիության դեմ պայքարում քաղաքացի գիտնականի իր ինքնատիպությունը Վ. Միքայելյանը մեկ անգամ ևս հաստատեց 1995-ին, երբ գիտական և լայն հասարակայնության դատին հանձնեց «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919 թթ.)» ժողովածուն՝ կայսերական Գերմանիայի ԱԳՆ քաղաքխիվի նյութերի հիման վրա: Փաստաթղթերի մեծածավալ ռուսերեն այս հավաքածուն կուռ է մեթոդական և հետևողական պատմական ժամանակագրության տեսակետից, կարևոր մի առավելություն, որի գաղտնիքը, կարծում ենք, դարձյալ այն է, որ ժողովածուի նյութերը հայտնաբերողը, գլխավոր խմբագիրը, առաջաբանն ու ներածությունը գրողը Վ. Միքայելյանն է: Հեղինակին աշխատատար և պատասխանատու այս գործին մղել է ճշմարտության բացահայտմանը միշտ հետամուտ գիտնականի մեծ պատասխանատվությունը, այն իրողությունը, առիթը, որ առավել շատ վերջին տարիներին Թուրքական կառավարող շրջանները, պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը, Թուրքիայի գրավոր և բանավոր քարոզչության ողջ կորպուսը միակամ ջանում են «ապացուցել», որ Օսմանյան կայսրությունում հայերի ոչ մի ցեղա-

սպանություն չի եղել: Ավելին, հին մոտիվների նոր կատարմամբ, նրանք անգլիական, ֆրանսիական, ամերիկյան արխիվային փաստաթղթերը համարում են միտումնավոր: Ստեղծված կացության մեջ, բնական է, առաջնահերթ նշանակություն է ստանում կայզերական Գերմանիայի արխիվներից և առաջին հերթին նրա արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվից պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերի հրապարակումը, մի երկիր, որի կառավարության հանցավոր թողտվությամբ և աջակցությամբ տեղի է ունեցել XX դարի առաջին ցեղասպանությունը: Ի՞նչ անել, ինչպե՞ս ծանոթանալ և ծանոթացնել լայն հասարակությանը աղճատված և հաճախ նաև չհրապարակված այն փաստաթղթերի հետ, որոնք ննջում էին եվրոպական տերությունների մեջ հայոց ցեղասպանության ամենամեծ հանցակից Գերմանիայի արխիվներում: Ահա կարևոր մի խնդիր, որի լուծման համար ակադեմիկոսի ջանքերը ի վերջո պսակվել են հաջողությամբ:

1989 թ. Վ. Միքայելյանը մեկնեց Իոնն՝ հայկական ցեղասպանության շուրջ նյութերի ուսումնասիրության համար: Գերմաներենի խոր իմացությունը նրան հնարավորություն տվեց անհամեմատ կարճ ժամանակամիջոցում գերմանական արխիվներից ժողովել իրեն անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք ավելի քան 3500 միկրոկադրեր են, որից 1000-ից ավելին տեղ են գտնում նրա կազմած ժողովածուի մեջ: Նորահայտ նյութերի ընդդրկմամբ, հեղինակը ցույց է տալիս, որ Թուրքիայի և Գերմանիայի կառավարող շրջանները տրորել էին բարոյականության տարրական նորմերը:

Արժեքավոր այս ժողովածուից զատ, Վ. Միքայելյանը 1980-ական թվականներին բազում հոդվածներ հրապարակեց հայերի ցեղասպանության կեղծարարների դեմ, որոնք հրապարակախոսական շնչով գրված մշտամնա արժեքներ են:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանը երկար տարիներ դասախոսական աշխատանք է կատարել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, վաստակել ուսանողության հարգանքն ու սերը: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է մեկ տասնյակից ավելի թեկնածուական դիսերտացիա:

Ավարտելով մեր խոսքը Վ. Միքայելյանի՝ ակադեմիկոս պատմաբան գիտնականի, գիտության կազմակերպչի, հմուտ խմբագրի, հրապարակախոսի և մանկավարժի մասին, չենք կարող չնշել նրա մարդկային վեհության, բարոյական բարձր նկարագրի մասին: Այս առումներով նա անհիշաչար իր ժողովրդի հարազատ զավակն է՝ բարի, կամեցող, միշտ լավի ու գեղեցիկի սատարող: Իր ողջ գործունեությամբ նա ապացուցում և ուսուցանում է, որ հայրենիքի համար պետք է անդադար աշխատել:

Ցանկանում ենք մեծ գիտնականին, հայրենասեր քաղաքացուն, մեր լավ ընկերոջը քաջառողջություն և երկարամյա բեղուն գործունեություն:

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ
ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ